

գոյն Մաշտոցին՝ կրնար կատարուիլ նոյն իսկ «ի դուռն եկեղեցոյն», որ հասկանալի է գիւղին կամ քաղաքին, եւ ոչ թէ վանուց: Հին սովորոյթք այս տեղ այլափոխուած են, եւ վանքերու իրաւունքը տկարացած՝ քահանայից շահադէտ պայքարին երեսէն, որոյ սկիզբը շատ հին է (Սահ. 100):

Ծ. — Օրհնուչիւն: — Մասամբ նման, եւ ուրիշ մասամբ մեծապէս կը տարբերէր սովորական մատաղի արարողութենէն, ունենալով տարօրինակ ու հնաւանդ նկարագիր մը՝ զոր կը տեսնենք միջնադարեան մատենագրաց քով: Ասոնց մէջ երիցագոյնն է ԺՊ դարու Մաշտոցը, որ այսպէս կը նկարագրէ զայն:

Ա. Խոստացեալը կը բերեն «ի դուռն եկեղեցոյն», որ է գաւիթը, ինչպէս կը կոչէին. եւ «առաջի խաչին», որ միշտ մնայուն էր հոն գաւթին մէջ, անասնոյն վրայ կը դնեն, կ'ըսէ, «կարմիր (նարտ<sup>1</sup>) եւ բամբակ», ու կը ծածկեն «կարմիր հանդերձիք» կամ ծածկոյթներով: Այս խրատը, կրկնուած նաեւ յաջորդ օրինակներէն ոմանցմէ, ինչպէս 1216ի, 1386ի եւն (Վենետիոյ), Շնորհալին կը պարզէ

1. Փակագծեալը Վենետիոյ 1216ի մաշտոցէն է: